ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 20- ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ (9-10 , 11-12 , 13-16 ՏԱՐԵԿԱՆ) ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՖՈՒՏԲՈԼԻ <<ԿԱՇՎԵ ԳՆԴԱԿ>> ԱԿՈՒՄԲԻ ԳԱՎԱԹԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ 728 հրամանագրի 1.6 –րդ և 1.19-րդ կետերի պահանջներով

որոշում եմ՝

1. Հաստատել.

1) Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին նվիրված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների (9-10, 11-12, 13-16 տարեկան) աշակերտների շրջանում ֆուտբոլի <<Կաշվե գնդակ>> ակումբի գավաթի մրցումների տարածքային և մարզային փուլերի կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության անկախության 20- ամյակին նվիրված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների (9-10, 11-12, 13-16 տարեկան) աշակերտների շրջանում ֆուտբոլի <<Կաշվե գնդակ>> ակումբի գավաթի մրցումների տարածքային փուլի մրցավարական հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին նվիրված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների (9-10, 11-12, 13-16 տարեկան) աշակերտների շրջանում ֆուտբոլի <<Կաշվե գնդակ>> ակումբի գավաթի մրցումների 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերի անցկացման ժամանակացույցը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Կազմկոմիտեին / նախագահ Գ.Բադալյան/՝

1) ապահովել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների 9-10 տարեկան պատանիների և աղջիկների, 11-12 և 13-16 տարեկան պատանիների զանգվածային մասնակցությունը Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին նվիրված ֆուտբոլի <<Կաշվե գնդակ>> ակումբի գավաթի տարածքային և մարզային փուլերի մրցումներին.

2) կազմակերպել մրցումների մարզային փուլի բացման և փակման հանդիսավոր արարողություն.

3) մրցումների ավարտից հետո ներկայացնել գրավոր հաշվետվություն:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ի. Ասատրյանին՝

1) մարզի համայքներում կազմակերպել մրցումների բացման և փակման հանդիսավոր արարողություններ .

2) մարզի համայքների ղեկավարների հետ միասին ապահովել մրցումների 2-րդ , 3-րդ և 4-րդ փուլերում հաղթող թիմերի մասնակցության հետ կապված խնդիրները:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա.Ղուկասյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ